



0028, ՀՀ, ք. Երևան, Օրբելի եղբայրների 22
22 Orbeli Brothers, Yerevan, 0028, RA

Հեռ./Tel.(374 10) 21 01 40 111
Web: hesc.am; e-mail: info@hesc.am

№ 9/9.1.1/15358-2024

«ՇԻՐԱԿԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ԼԵՎՈՆ ԲԱՐՍԵՂՅԱՆԻՆ
(ք. Գյումրի, Մադոյան փ., 130/1, էլ.հասցե՝ levon@asparez.am)

Հարգելի՛ Լևոն Բարսեղյան,

Ի պատասխան սույն թվականի մայիսի 6-ի ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն հասցեագրած Ձեր դիմումի՝ տեղեկացնում եմ հետևյալը:

ՀՀ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների խոշորացման և գիտահետազոտական կազմակերպությունների հետ ինտեգրման, ինչպես նաև «Ակադեմիական քաղաք» ծրագրի իրականացմանն ուղղված միջոցառումները բխում են պետական քաղաքականության նպատակներից, որոնք ամրագրված են «ՀՀ կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը հաստատելու մասին» օրենքում: Վերոնշյալ Օրենքից բխող գործողությունների ծրագրի 2.2 «Ցանցային կրթական համակարգերի ներդրում և ենթակառուցվածքների բարելավում» նպատակով «Ակադեմիական քաղաք» ծրագրի շրջանակում նախատեսվում է բարձրագույն ուսումնական հաստատությունների համալրում՝ որակյալ կրթության կազմակերպման և հասանելիության համար անհրաժեշտ ժամանակակից գիտական հետազոտություններին միտված լաբորատոր, նախատիպավորման, փորձարկման և այլ ենթակառուցվածքներով, մարզական, հանգստի, գրադարանային, հանրակացարանային կամ բնակելի թաղամաս՝ ուսանողների և դասախոսների համար և այլ միջավայրեր, որոնք մրցունակ հետազոտությունների և բարձրագույն կրթական համակարգի նախապայման են հանդիսանալու:

Անդրադառնալով Ձեր դիմումով բարձրացված բուհերի խոշորացման գործընթացին տեղեկացված լինելու վերաբերյալ փաստին, հարկ եմ համարում նշել, որ 2023 թվականի հուլիսի 13-ին ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրավերով (<https://escs.am/am/news/17438>)՝ ՀՀ-ում գործող բուհերին և պետական գիտական կազմակերպություններին առաջարկվել էր քննարկել և մինչև 2024 թվականի փետրվարի 15-ը ներկայացնել հայեցակարգային առաջարկություններ՝ ՀՀ պետական բուհերի խոշորացման և գիտահետազոտական

կազմակերպությունների հետ միավորման գործընթացի վերաբերյալ: Հրավերով ներկայացվել էր նաև այն 6 ուղղությունները, որոնց շուրջ նախատեսվում է կազմակերպել խոշորացման գործընթացը: Ժամկետի ավարտին ստացվել են հայեցակարգային առաջարկություններ (Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական համալսարանից առաջարկություններ չեն ներկայացվել), որոնք քննարկվելու են ձևավորված աշխատանքային խմբերում:

Նշեմ, որ շահառու կազմակերպությունները, ինչպես նաև ոլորտում գործունեություն ծավալող այլ կազմակերպություններ նախապես առաջադրել են ներկայացուցիչներ և վերջիններիս ներգրավմամբ, արդեն իսկ հայտարարված 6 ուղղություններով ձևավորվել են աշխատանքային խմբեր: Համապատասխան խմբերում կազմակերպվել են քննարկումներ բուհերի խոշորացման գործընթացին, կլաստերների կառուցվածքին և կառավարման մոդելին առնչվող հարցերի վերաբերյալ և առաջիկայում քննարկվելու և դիտարկվելու են նաև այդ խմբերի ցանկերում ներառված բոլոր բուհերի և կազմակերպությունների առաջարկները, մտահոգություններն ու դիտողությունները:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ «Ակադեմիական քաղաք» ծրագրի շրջանակում մարզային բուհերի գործունեության, կրթական ծրագրերի վերլուծության և զարգացման վերաբերյալ հարցերի քննարկման նպատակով ՀՀ ԿԳՄՍ նախարարի մասնակցությամբ աշխատանքային խորհրդակցություն է անցկացվել մարզերում գործող ՀՀ պետական բուհերի ղեկավարների հետ (<https://escs.am/am/news/21916>):

Վերոնշյալ գործընթացի շրջանակներում մարզային բուհերի հետագա գործունեության ուղղությունները քննարկելու, հայեցակարգային առաջարկություններ ներկայացնելու, ինչպես նաև հետագա համագործակցության ուղղություններն ուրվագծելու համար Կոմիտեի կողմից գրություններ են ուղարկվել մարզային բուհեր և բուհերի մարզային մասնաճյուղեր՝ թեկնածուներ ներկայացնելու նպատակով: Վերջիններս ընդգրկվելու են ձևավորված աշխատանքային խմբերում:

 Recoverable Signature

X 

ԱՐՏՈՒՐ ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Signed by: MOVSISYAN ARTUR 1114810762

ԱՐՏՈՒՐ ՄՈՎՍԻՍՅԱՆ
(պարտականությունները կատարող)